ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ

Սույն տեղեկատվական թերթիկում արծարծվում են Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, նրանց հավասարեցված անձանց, զոհվածների ընտանիքներին, հաշմանդամ դարձած զինծառայողներին & զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին որոշ արտոնությունների դիմաց դրամական օգնություն հատկացնելու կարգը: Տրվում են այն փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ են ներկայացնել դրամական օգնություն ստանալու համար & այլ օգտակար տեղեկատվություն:

Մայիս 2004

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ Ո՞Ր ԽՄԲԵՐԻՆ Է ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՆՇԱՆԱԿՎՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Արտոնությունների դիմաց դրամական օգնություն նշանակվում է հետևյալ սոցիալական խմբերին.
ա) Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, նրանց հավասարեցված անձանց և զոհվածների ընտանիքներին,
բ) հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐ

Հայրենական մեծ պատերազմի վետերանները ՀՀ այն քաղաքացիներն ու ՀՀ-ում մշտապես բնակվող այն անձինք են, ովքեր մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին, ինչպես նաև պատերազմի տարիներին Լենինգրադի բլոկադայի մասնակիցները և ֆաշիստական համակենտրոնացման ճամբարների նախկին անչափահաս գերիները:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Հայրենական մեծ պատերազմի վետերաններին հավասարեցված անձինք այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցներն են:
Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ վետերաններին հավասարեցված անձինք այլ պետություններում մարտական գործողությունների ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողները, այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցները, որոնք հետագայում հաշմանդամ են դարձել, ինչպես նաև նախկին խորհրդային բանակում հաշմանդամ դարձած անձինք են:

Ո՞ՐՆ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԸՆՏԱՆԻՔ

Զոհվածի ընտանիքը Հայրենական մեծ պատերազմում և այլ պետություններում մարտական գործողությունների ժամանակ զոհված զինծառայողների ծնողներն են, այրիները և մանկուց հաշմանդամ զավակները:

Ո՞Վ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ

Հաշմանդամ զինծառայող են համարվում ՀՀ պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների համակարգի հրամանատարական և շարքային անձնակազմի այն ծառայողները, ում հաշմանդամությունն առաջացել է.
զինվորական ծառայության ընթացքում,
ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում, 3 ամսվա ժամկետից ուշ, սակայն ծառայության ժամանակ ծագած հաշմանդամության պատճառով, այն է զինվորական ծառայության ժամանակ ստացած վնասվածքները, խեղումները և առաջացած հիվանդությունները:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Նրանք են.

18 տարին չլրացած կամ անկախ տարիքից հաշմանդամ ճանաչված զավակները, եղբայրները, քույրերն ու թոռները, ընդ որում, եթե եղբայրները, քույրերն ու թոռները չունեն աշխատունակ ծնողներ ու չեն աշխատում,

կենսաթոշակային տարիքը լրացած կամ անկախ տարիքից հաշմանդամ ճանաչված ծնողները, կինը կամ ամուսինը, եթե չեն աշխատում,

ծնողներից մեկը կամ ամուսինը (կինը), պապը, տատը, եղբայրը կամ քույրը՝ անկախ տարիքից ու աշխատունակությունից, եթե նա խնամում է զոհված (մահացած) զինծառայողի՝ 8 տարին չլրացած զավակներին, եղբայրներին, քույրերին կամ թոռներին ու չի աշխատում, պապն ու տատը, եթե չունեն աշխատունակ զավակներ ու չեն աշխատում:

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Դրամական օգնությունը տրվում է էլեկտրաէներգիայից, տրանսպորտից, գազից, ջերմամատակարարումից օգտվելու ծախսերը փոխհատուցելու համար:

ՈՐՔԱ՞Ն Է ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ

Դրամական օգնությունը տրվում է հետևյալ չափերով.

Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին և նրանց հավասարեցված անձանց՝ ամսական 2000 դրամ,

Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին և նրանց հավասարեցված անձանց՝ ամսական 3500 դրամ,

զոհվածի ընտանիքին՝ ամսական 3500 դրամ,

հաշմանդամ զինծառայողին՝ ամսական 3000 դրամ,

զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքին՝ ամսական 5000 դրամ, իսկ եթե ընտանիքի անդամների թիվը 5-ից ավելի է, ապա 5-ից ավելի անդամ ունեցող ընտանիքի յուրաքանչյուր անձի հաշվով լրացուցիչ տրվում է 1000-ական դրամ:

Զոհվածի ընտանիքի բոլոր անդամների համար նշանակվում և վճարվում է մեկ ընդհանուր դրամական օգնություն:

Ընտանիքի անդամի պահանջով դրամական օգնության նրա բաժինը համամասնորեն առանձնացվում և վճարվում է առանձին: Դրամական օգնությունն առանձնացվում է այն ամսվան հաջորդող ամսվա սկզբին, երբ ստացվել է առանձնացման մասին դիմումը:

ՈՒ՞Մ ՊԵՏՔ Է ԴԻՄԵԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Դրամական օգնություն ստանալու համար պետք է դիմել սոցիալական ապահովագրության մարմինների՝ դիմողի հաշվառման կամ փաստացի բնակության վայրի համապատասխան ստորաբաժանում:

Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայրենական մեծ պատերազմի մասնակիցները, հաշմանդամները, նրանց հավասարեցված անձինք, զոհվածի ընտանիքները ներկայացնում են.

դիմում, անձը հաստատող փաստաթուղթ, տեղեկանք՝ բնակության վայրից, Հայրենական մեծ պատերազմի մասնակցի, հաշմանդամի կամ զոհվածի ընտանիքի կարգավիճակը հավաստող փաստաթուղթ:

Հաշմանդամ զինծառայողները ներկայացնում են.

դիմում, անձը հաստատող փաստաթուղթ, հաշմանդամի կարգավիճակը հավաստող փաստաթուղթ, տեղեկանք բնակության վայրից:
Զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքները ներկայացնում են.
դիմում, զոհվածի ընտանիքի անդամ ու զինծառայողի զոհված (մահացած) լինելու վերաբերյալ փաստաթղթեր, տեղեկանք ընտանիքի անդամի(ների) բնակության վայրից:

Ե՞ՐԲ Է ՆՇԱՆԱԿՎՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև 2004 թ-ի հունիսի 27-ը դիմելու դեպքում դրամական օգնությունը նշանակվում է 2004 թ-ի հունվարի 1-ից: 2004թ-ի հունիսի 27-ից հետո դիմելու դեպքում դրամական օգնությունը նշանակվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:
Հայրենական մեծ պատերազմի վետերանները, նրանց հավասարեցված անձինք, ինչպես նաև հաշմանդամ դարձած զինծառայողներն ու զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամները ունեն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև ջրահեռացման, աղբահանության և ռադիոյի բաժանորդային վարձերը 50 տոկոս զեղջով վճարելու իրավունք, իսկ Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ վետերանները՝ նաև հեռախոսի բաժանորդային և բնակարանի վարձի 50 տոկոս զեղջով վճարելու իրավունք:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՆԵՐՈՎ

ք. Երևան, Նալբանդյան 7, բն 2;
հեռ/ֆաքս. 223786, 540199, էլ. փոստ՝ yerevan@ayla.am
ք. Գավառ, մարզպետարանի շենք, 4-րդ հարկ, հեռ/ֆաքս. (064) 25503, էլ. փոստ՝ gavar@ayla.am:
ք. Կապան, Ա. Մանուկյան 1, բն. 72,
հեռ/ֆաքս (085) 62511, էլ. փոստ kapan@ayla.am
ք. Գյումրի, Տիգրան Մեծի փող. 1 բն. 2;
հեռ/ֆաքս. (041) 38236, էլ. փոստ gyumri@ayla.am:
ք. Վանաձոր, հեռ/ֆաքս. (051) 22317,
էլ. փոստ՝ vanadzor@ayla.am:
ք. Իջևան, Մարզպետարանի շենք,
հեռ/ֆաքս. (063) 62499, էլ. փոստ ijevan@ayla.am:
ք. Գորիս, Մաշտոցի փող. 3, 2-րդ հարկ.,
հեռ./ֆաքս (084) 25861, էլ. փոստ goris@ayla.am:

Նաև կարող եք այցելել ՀԵԻԱ վեբ կայք www.ayla.am և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վեբ կայք՝ www.mss.am հասցեներով:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից՝ Փրայսուոթերհաուսքուփերի և ՀՀ Կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ Միացյալ Թագավորության Միջազգային Զարգացման նախարարության կողմից տրամադրված միջոցների հաշվին: